
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանային էներգետիկ գարգացումների շուրջ	4
Поставка природного газа в Европу: дилемма между «ценностной принципиальностью» и энергетической зависимостью	7
Բուլղարիա. էներգակիրների տարհանման նոր հանգույց	11
Ուրան. արտադրություն և պաշարներ	14
Россия и ЕС: энергетическое сотрудничество неизбежно	18
Новости ТЭК Азербайджана и Каспия (9 января – 15 февраля)	23

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

2008թ. սկզբին տարածաշրջանում տեղ գտան կարևոր նշանակության էներգետիկ զարգացումներ, որոնք կարող են լուրջ ազդեցություն թողնել տարածաշրջանային էներգետիկ քաղաքականության վրա: Կարևորագույնն այստեղ, անկասկած, ճգնաժամն է Իրանի և Թուրքմենստանի հարաբերություններում, որը լուրջ ազդեցություն կունենա Իրան-Թուրքիա, Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա:

Թուրքմենստանի նոր էներգետիկ քաղաքականության ուրվագծերը

2007թ. հոկտեմբերին Թուրքմենստանի նախագահ Կ.Բերդիմուխամետովի կողմից ստեղծված Ռազմավարական պլանավորման և տնտեսական զարգացման ինստիտուտը 2007-ի դեկտեմբերին ներկայացրեց իր առաջին ռազմավարական զարգացման զեկույցի նախագիծը, որը Թուրքմենստանի էներգետիկ քաղաքականության հնարավոր փոփոխությունների նախակարապետը հանդիսացավ: Զեկույցի համաձայն՝ երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու համար հարկավոր է ոչ միայն նպաստել արտասահմանյան ներդրումների կայուն հոսքին և ազատականացնել երկրի տնտեսական կյանքը, այլ նաև նպատակաուղղված կերպով բարձրացնել թուրքմենական գազի գինը բոլոր գնորդների համար: Գնի բարձրացման հիմնական նշանակությունը ոչ միայն պետական եկամուտների ավելացումն է, այլ նաև ԵՄ-ի հետ ընդհանուր էներգետիկ ռազմավարության ստեղծումը՝ հիմնված բաց շուկայական մեխանիզմների կիրառման սկզբունքի վրա:

2007-ին Թուրքմենստանը բարձրացրեց Ռուսաստանին և Չինաստանին վաճառվող գազի գինը, իսկ Պեկինը 2008-ի հունվարի 21-ին Թուրքմենստանի հետ կնքած պայմանագրով համաձայնեց 1000մ³-ի համար վճարել \$195, որի \$50-ը Աշգաբադը պետք է ուղղի Թուրքմենստան-Չինաստան գազատարի կառուցման աշխատանքների ֆինանսավորմանը: Միևնույն ժամանակ, փորձագետների և իրանական կողմի համար իսկական անակնկալ դարձավ Թուրքմենստանի անսպասելի որոշումը՝ հունվարի 1-ից դադարեցնել գազի արտահանումը Իրան: Անակնկալն այն էր, որ թուրքմենական ղեկավարությունը գազի մատակարարումն Իրանին կասեցրեց առանց իրանական ղեկավարության հետ գազի գնի հետ կապված բանակցություններ սկսելու: Մատակարարման կասեցումը հիմնավորելով գուտ տեխնիկական պատճառներով՝ թուրքմենական կառավարությունը միայն մեկ շաբաթ անց Թեհրանին տեղեկացրեց, որ չի վերականգնի գազի արտահանումն Իրան, եթե Թեհրանը չհամաձայնի 1000մ³-ի համար ներկայիս \$75-ի փոխարեն վճարել \$150: Նման քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես վերջնագրային, քանի որ գազի մատակարարման դադարեցումը տեղի ունեցավ անգամ Իրանի համար հարաբերականորեն ցուրտ ձմռանը, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Իրանի հյուսիսային շրջաններն օգտագործում են միայն թուրքմենական գազ, իսկ երկրի հարավում արտադրվող բնական գազը հյուսիս տեղափոխելու համար իսլամական հանրապետությունը գրեթե ոչ մի տեխնիկական հնարավորություն չունի:

Այս համատեքստում Իրանի ԱԳՆ խոսնակի՝ թուրքմենական կառավարության քայլին տված «անբարոյական» գնահատականն արդարացված է: Միևնույն ժամանակ, Թուրքմենստանի քայլը կարելի է գնահատել ոչ միայն բարոյականության, այլ նաև միջազգային իրավունքի կատեգորիաներով: Իրանի պետական գազային ընկերության փոխնախագահ Ի.Գամբարին հայտարարել է, թե Թեհրանը, բացի Աշգաբադի հետ իր հարաբերություններում ճշգրտումներ մտցնելուց, պատրաստվում է դիմել Միջազգային դատարան՝ Թուրքմենստանի անօրինական քայլից կրած կորուստների փոխհատուցման հայցով:

Ինչևէ, ակնհայտ է, որ Իրանի և Թուրքմենստանի էներգետիկ համագործակցությունը հիմնովին կասեցվելու հեռանկարի առջև է կանգնած: Ստորև փորձենք ներկայացնել Թուրքմենստանի քաղաքականության փոփոխման վերաբերյալ այն հիմնական տեսակետները, որոնք այսօր կան:

Ռեսուրսների բացակայություն. Ռուսաստանի հետ էներգետիկ համագործակցության խորացման և Չինաստանի հետ համագործակցության պայմաններում Թուրքմենստանը կանգնել է գազի անհրաժեշտ պաշարների բացակայության խնդրի առջև: Հենց այս պատճառով էլ Թուրքմենստանը հրահրել է Իրանի հետ հարաբերությունների ճգնաժամը, որի արդյունքում երկարաժամկետ կտրվածքով կդադարեցվի գազի մատակարարումն այդ երկրին: Այս մոտեցումը, մեր կարծիքով, միայն մասամբ կարող է բացատրել ստեղծված իրավիճակը, քանի որ տարեսկզբին գազի սակավության խնդիր Թուրքմենստանը չի ունեցել, և գազի արտահանման ծավալները Ռուսաստանի ուղղությամբ կտրուկ չեն ավելացել:

Թուրքմենստանը խաղում է Ռուսաստանի օգտին. Կասեցնելով գազի արտահանումը դեպի Իրան՝ Թուրքմենստանը լուրջ վնաս հասցրեց իրանա-թուրքական էներգետիկ համագործակցությանը, քանի որ Թեհրանը սեփական կարիքները հոգալու համար ստիպված եղավ կասեցնել գազի արտահանումը Թուրքիա: Արդյունքում՝ Ռուսաստանն ավելացրեց գազի մատակարարումը Թուրքիային «Երկնագույն հոսք» գազատարի միջոցով, իսկ Անկարայում և Բրյուսելում սկսեցին խոսել այն մասին, որ Իրանը և Թուրքմենստանը չեն կարող համարվել «Նաբուքքո» գազատարի նախագծի հուսալի մասնակիցներ: Սա լուրջ հարված էր Իրանի համար, քանի որ դեռ 2007-ի դեկտեմբերին Իրանի ԱԳՆ ղեկավար Մ.Սոթափին հայտարարել էր, թե Իրանը նպատակ ունի մասնակցել նախագծին և ստորագրել էր Իրան-ԵՄ էներգետիկ համագործակցության սկզբունքների մասին դեռևս 2004-ին մշակված համաձայնագիրը: Այս ամենը, ակնհայտորեն, բխում է Ռուսաստանի շահերից, որը երկարաժամկետ տեսակետից կարողացել է Թուրքմենստանին առաջարկել վերջինիս համար ձեռնտու համագործակցության փաթեթ-ծրագիր:

Թուրքմենստանը խաղում է ԵՄ օգտին. Համաձայն թուրքմենական ղեկավարության վերջին հայտարարությունների՝ պատրաստվում է ստորագրվել Թուրքմենստան-ԵՄ էներգետիկ համագործակցության համաձայնագիր: Հաշվի առնելով այն, որ թուրքմենական գազը ԵՄ հասնում է 2 ճանապարհով՝ Իրան և Ռուսաստան, Աշգաբադը որոշել է կասեցնել Իրանի միջնորդությունը Եվրոպայի հետ համագործակցությունում և օգտվել զուտ ռուսական ճանապարհից կամ խթանել Տրանսկասպյան գազատարի կառուցումը, որը հնարավորություն կտա օգտագործել Բաքու-Էրզրում գազատարի ներուժը՝ Թուրքիա և ԵՄ գազի արտահանման տեսանկյունից: Այս վարկածի դեմ են խոսում հիմնականում դեռևս չկարգավորված թուրքմենա-ադրբեջանական էներգետիկ վեճերը և ՌԴ-ԵՄ էներգետիկ հարաբերությունների անկատարությունը: Մյուս կողմից, թուրքմենա-իրանական գազային վեճի հիմնական զոհը դարձավ հենց Թուրքիան, քանի որ Իրանը ստիպված եղավ կասեցնել գազի արտահանումն այս երկիր՝ սեփական կարիքների ապահովման անհրաժեշտությունից ելնելով: Նշենք, որ Թուրքիայի կառավարության քննադատությանն արժանացան թե՛ Իրանը, թե՛ Թուրքմենստանը, իսկ այս պայմաններում Բաքու-Էրզրումին միանալու ձգտմամբ Աշգաբադի քաղաքականությունը վերլուծելը բավականաչափ հիմնավորված համարվել չի կարող:

Համենայնդեպս, ներկայումս իրանա-թուրքմենական հարաբերությունները Թուրքմենստանի անկախացումից հետո ամենախոր ճգնաժամն են ապրում, և դրա արդյունքներից մեկը կարող է լինել Իրանի հարաբերությունների ակտիվացումն Ադրբեջանի ուղղությամբ:

Ճգնաժամի հնարավոր ազդեցությունն իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա

Երկրի հյուսիսային հատվածին գազի մատակարարումն ապահովելու համար Իրանը մոտակա տարիներին նախատեսում է զարգացնել սեփական էներգատրանսպորտային ենթակառուցվածքը: Մակայն հնարավոր է նաև, որ Թեհրանը գնա Բաքվի հետ էներգետիկ համաձայնագրերի կնքման ճանապարհով: Այս հնարավորության առաջին վկայությունն է փետրվարի 1-ին «Ազերիգազ» ՓԲԸ գործադիր տնօրեն Ա.Մելիքովի հայտարարությունն այն մասին, թե Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը պատրաստվում է գազի մատակարարման պայմանագիր կնքել Իրանի հետ: Ըստ տարեսկզբին ներկայացված տվյալների՝ 2008-ին Ադրբեջանում գազի արտադրությունը կավելանա մոտավորապես 55%-ով, իսկ Ադրբեջան-Իրան վերանորոգված գազատարը հնարավորություն կընձեռի մինչև 3 մլրդ մ³ գազ արտահանել Իրան: Մա Իրանի հյուսիսում սպառման 1/3-ն է կազմում, ինչը չի կարող փոքր քանակություն համարվել:

Մ.Մոթաքին հունվարին հայտարարել էր, թե չի բացառում Իրանի տարածքի օգտագործումն Ադրբեջանից Թուրքիա գազի արտահանման համար՝ հաշվի առնելով, որ Իրանի խոշորագույն գազային հանգույց համարվող Թավրիզ քաղաքը բավական մոտ է Ադրբեջանի սահմանին:

Ակնհայտ է, որ Իրանի հետ էներգետիկ տրանսպորտային նախագծերի իրականացման հարցի վերաբերյալ Ադրբեջանի որոշումը մեծ մասամբ կախված է Բաքվի՝ Արևմուտքի հետ հարաբերություններից: Մակայն Իրան-Արևմուտք հարաբերությունների հնարավոր լավացումը, Վրաստանում քաղաքական անկայունության խորացումը և իրանա-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումը կարող են բերել այս հարցի շուրջ Բաքվի քաղաքականության փոփոխության: Միննույն ժամանակ, Իրանն Ադրբեջանի հետ էներգետիկ երկխոսության հետագա զարգացման ևս մեկ կարևոր լծակ ունի. այդ երկիրն է ապահովում Նախիջևանի գազամատակարարումը, ինչպես նաև ադրբեջանական այս անկլավ է ներկրում էլեկտրականություն: Այս պարագայում Իրանի հետ էներգետիկ հարաբերությունների խորացմամբ Ադրբեջանի շահագրգռվածությունն ունի օբյեկտիվ պատճառներ:

Ինչ վերաբերում է Ադրբեջան-Թուրքմենստան հարաբերություններին, ապա այստեղ որոշակի փոփոխությունների ակնկալիք մոտակա շրջանում չկա, իհարկե, թուրքմենա-ղազախա-ռուսական Մերձկասպյան գազատարի կառուցման նախագծի իրականացման իրական կյանք ստանալու պարագայում: Այսօր այս նախագիծը բավական իրատեսական և իրագործելի է, մանավանդ որ թուրքմենա-իրանական էներգետիկ հակամարտությունն ակնհայտորեն բարդացրել է Իրանի տարածքով թուրքմենական գազի արտահանումը Թուրքիա և ԵՄ:

*Սեակ Մարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ*

ПОСТАВКА ПРИРОДНОГО ГАЗА В ЕВРОПУ: ДИЛЕММА МЕЖДУ «ЦЕННОСТНОЙ ПРИНЦИПАЛЬНОСТЬЮ» И ЭНЕРГЕТИЧЕСКОЙ ЗАВИСИМОСТЬЮ

Последние события вокруг вопроса вступления Турции в Евросоюз на принципах полноправного членства привели к новым развитиям отношений в сфере транспортировки энергоресурсов из Центральной Азии и Южного Кавказа на европейский рынок.

Объективные параметры нынешнего расклада сил в геоэкономической системе «страны-производители энергоресурсов – страны-транзитеры энергоресурсов – страны-потребители энергоресурсов» указывают на то, что элементы эффективного функционирования и стабильного развития данной системы находятся в оппозирующем противостоянии с объективными параметрами геополитической системы региона, в свою очередь концентрирующимися вокруг системы «страны «без шансов» европейской интеграции – страны «с малыми шансами» европейской интеграции – страны «с большими шансами» и европейски интегрированные страны».

Здесь в качестве критерия европейской интеграции выступает членство, вероятность членства (большая и малая) и невозможность членства в Европейском Союзе. Простой анализ выявляет следующий объективный «закон»: обладание конкретными странами на евроазиатском пространстве реальными возможностями выступать в роли экспортера (производителя) энергоресурсов (природного газа) в центры европейской интеграции не коррелирует с возможностями этих стран стать субъектами интеграции в данных центрах. Туркменистан никогда не будет полноправным членом ЕС, у Азербайджана такие шансы близки к нулевой отметке, а о шансах России можно говорить с употреблением формулировки «малая вероятность». Показатели «закона» несколько меняются в отношении стран-транзитеров энергоресурсов в том смысле, что возрастает вероятность приема в члены ЕС по мере их территориальной близости к центрам европейской интеграции. У балканских стран (Хорватия, Македония, Босния и Герцеговина, Черногория, Сербия, Албания) высокие шансы на членство, у Турции они значительны, у Украины и Грузии – весьма вероятны.

Возникает естественный вопрос: до каких пределов возможно сохранение нынешней ситуации, если показатели зависимости европейских центров интеграции от поставок энергоресурсов растут, а требования к странам-кандидатам или потенциальным кандидатам ужесточаются? Другими словами и в более лаконичной форме это можно выразить следующим образом: до каких пределов «субъективная ценность» членства в ЕС будет превалировать над «объективными параметрами» поставок и транзита жизненно необходимого для ЕС энергетического продукта.

Пример Турции в этой связи можно рассматривать как «классический»¹. Став официальной страной – кандидатом на полноправное членство в ЕС и страной с открытым еще 3 октября 2005г. «переговорным досье» по вступлению в Союз, потенциально главный транзитер по поставкам природного газа из перспективных зон Каспийского бассейна, Центральной Азии и Ирана ныне пребывает скорее в состоянии удаленности, чем приближенности к одной из

¹ Исследования общественного мнения в странах ЕС последних лет выявили основные причины опасений в связи с возможностью вступления стран-кандидатов в Союз, которые строятся именно вокруг ценностного дискурса. См. Приложение.

главных целей его внешнеполитического курса последних 20 лет (если считать с 1987г., когда Турция подала официальную заявку о полном членстве в ЕС)¹.

Очевидно, что такое положение дел и такое отношение к ним не может устраивать ни продуцентов, ни, в особенности, транзитариев природного газа на европейский рынок. Ужесточение и обусловливание их членства в ЕС новыми параметрами будет с неизбежностью вести к созданию неких «картелей» интересов между продуцентами и транзитариями энергоресурсов, позиционирующих себя в качестве самостоятельной силы, по отношению к которой неприемлема «ценностная принципиальность» находящихся в зависимости от них европейских центров интеграции и одновременно потребление жизненно необходимого продукта (энергоресурса).

Существующая сегодня определенная конфронтация между продуцентами и транзитариями энергоресурсов (например, связка Россия – Украина) и соответствующее сближение между продуцентом и потребителем (например, Россия – Германия) не могут быть рассматриваемы в качестве объективной данности долгосрочного характера и применимости по отношению ко всем участникам, пребывающим в ролях «продуцент», «транзитарий», «потребитель». Неправильно проводить аналогии между, например, такими главными транзитариями природного газа на европейский рынок, какими являются Турция и Украина, с позиций их стабильности и долгосрочной лояльности к вопросу европейской интеграции, а также с позиций развития их отношений с главным продуцентом природного газа на европейский рынок (Россия).

Отношения в связке «транзитарий – потребитель» на некоторых сегментах европейского рынка газовых поставок также могут испытывать значительное давление по линиям «ценностная принципиальность» и «энергетическая зависимость».

Такая крупнейшая европейская страна, как Франция, может «до конца» оставаться принципиальной в вопросах поддержки европейских ценностей защиты справедливости и прав человека, в вопросе отстаивания своей точки зрения на вступление некоторых стран в ЕС. Переориентация интересов Франции на другие направления развития сотрудничества в сфере поставок газа будет адекватным ответом тем странам, которые используют свое географическое положение для давления на нее в вопросе отхода от защиты европейских ценностей². Последние во многом сформировались именно на традициях французской политико-правовой мысли.

А другие, менее влиятельные и мощные страны, выдержат подобное давление?

Важно отметить, что в складывающихся между основными транзитариями и потребителями отношениях, перманентно протекающих и сменяющих друг друга состояний «охлаждения» и «потепления», наибольшие дивиденды как экономического, так и политического характера может извлекать именно главный поставщик энергоресурса на рынок.

Россия может усилить свои позиции как в отношении транзитариев, так и в отношении потребителей природного газа.

¹ Первый раз Турция «постучалась в дверь европейской интеграции» в июле 1959г., когда она подала заявку на членство в предшественнице нынешнего Европейского Союза – Европейском Экономическом Сообществе (ЕЭС).

² 7 января 2008г. французская компания *Gaz de France* (GDF) выступила с заявлением о том, что ее попытка стать участником газопроводного проекта *Nabucco* потерпела неудачу. Члены консорциума отвергли предложение *GDF* об участии в проекте, объяснил сотрудник пресс-службы компании. Теперь она изучает другие проекты по транспортировке газа, сказал он. В их числе проект «Южный поток».

По данным информационного агентства *Reuters*, Турция 6 января 2008г. выступила против участия в проекте *GDF* по политическим мотивам: в Анкаре недовольны принятием во Франции закона, предусматривающего уголовное наказание за отрицание Геноцида армян 1915г., и сопротивлением французского президента Николя Саркози вступлению Турции в ЕС. Присоединение *GDF* к «Южному потоку» логично: «Газпрому» пригодился бы политически влиятельный партнер, а для *GDF* проект *South Stream* интересен тем, что в отличие от *Nabucco* он обеспечен надежными источниками сырья, считает Валерий Нестеров из российской инвестиционной компании «Тройка диалог» (*Gaz de France покидает Nabucco*, <http://www.vedomosti.ru/newspaper/article.shtml?2008/02/08/141338>).

Получившая подтверждение конкуренция некоторых транзитариев между собой на рынке газовых поставок в Европу также играет на руку России. Так, после визита премьер-министра Украины Ю.Тимошенко в столицу ЕС Брюссель (27-28 января 2008г.), во время которого она выступила с предложением нового проекта поставок природного газа на европейский рынок (*White stream* / Белый поток)¹, в ее интервью отечественным изданиям подтвердились намерения Украины по перетягиванию «транзитного каната» Турции на себя: «Украина имеет уже проложенные трассы, по которым могут прокладываться новые газопроводы. Мощности газотранспортной системы Украины недозагружены, и их можно использовать для транспортировки дополнительных объемов «голубого топлива» в Европу. Украина располагает инфраструктурой для строительства газопроводов, газоперекачивающими агрегатами, трубами, сервисом. Чтобы построить такую инфраструктуру в Турции, нужно чрезвычайно много денег – больше, чем для строительства газопровода. Поэтому шансы у нас есть»².

Наибольшей ценностью применительно к европейской специфике в сегменте рынка под названием «поставка-транзит-получение природного газа» выступает стабильность, которую могут поддерживать лишь немногие, а точнее лишь один крупнейший игрок данного сегмента. Продолжающееся огосударствление крупнейшей газовой компании евроазиатского региона («Газпром»), усиление военно-политической силы в сфере российскоцентричного обеспечения региональной коллективной безопасности (ОДКБ) и тому подобные факторы будут способствовать повышению роли России в качестве стабильного партнера на газовом рынке³, хотя следует признать, что нынешнему политическому руководству необходимо сделать еще очень многое, чтобы подобный образ России укрепился в сознании ее главных европейских партнеров.

Обнаружившиеся с начала текущего года трудности и последовавшие за ними дефицит газовых поставок и обоюдные обвинения между Туркменистаном, Ираном и Турцией могут привести к переориентации того же Туркменистана на российский вектор поставок газа на европейские рынки⁴.

Михаил Агаджанян

¹ Общая протяженность трубопровода оценивается в около 1 тыс. км, в том числе по территории Грузии – 100 км (от точки западнее Боржоми до черноморского побережья вблизи Супсы), по дну Черного моря (от района грузинской Супсы до украинской Феодосии) – 650 км, по территории Украины – 250 км в пересечении крымского полуострова с двумя возможными ветками выхода на Европу (или подсоединение к газотранспортной системе Украины, или прокладка дополнительной трубы протяженностью в около 300 км до территории Румынии по мелководному участку Черного моря). Проектная мощность газопровода после реализации первой фазы проекта (поставки с месторождений Азербайджана) может составить 8 млрд м³ газа в год, второй фазы (дополнительно к поставкам Азербайджана поставки туркменского газа) – 16 млрд м³, третьей фазы (привлечение дополнительных газовых мощностей Казахстана и Узбекистана) – 32 млрд м³. Предполагаемые сроки начала поставок природного газа по новому газопроводу - 2012-2014 годы

² Али Алиев, Украинское уSTREAMление, <http://www.expert.ru/articles/2008/01/30/white-stream/>.

³ «Спросите у турок, что бы они делали без «Голубого потока» после взрывов и перебоев в поставке газа на газопроводах, которые идут в Турцию из третьих стран. Уже не один год и не один раз на протяжении месяцев мы поддерживали баланс газа в Турции, увеличив почти в полтора раза свыше плана поставки газа по «Голубому потоку». Особенно это чувствительно для Турции в зимний период» (из интервью Председателя правления компании «Газпром» А.Миллера российскому изданию «Коммерсант», http://www.gazprom.ru/comments/2007/06/290947_24220.shtml, 29.06.2007).

⁴ «Газпром» может получить не только дополнительные прибыли от продажи газа, но и неподмоченную репутацию на фоне падения доверия к Туркмении и Ирану» (*«Газпром» побеждает в новой «газовой войне» без единого выстрела*, <http://www.neftegaz.ru/lenta/show/75075/>, 16.01.2008).

Социологический опрос населения стран Европейского Союза по теме
 «Каковы, на ваш взгляд, главные вызовы,
 стоящие перед балканскими странами¹ и Турцией
 на пути их вступления в Европейский Союз?»
 (опрос проводился в марте-мае 2006г., до момента
 официального вступления
 Болгарии и Румынии в ЕС)²

<i>Страна</i>	<i>Уважение прав человека и прав национальных меньшинств (%)</i>	<i>Примирение / сотрудничество с соседними странами (%)</i>	<i>Демократия (%)</i>
Австрия	40	27	24
Бельгия	55	32	37
Великобритания	38	25	23
Венгрия	37	41	30
Германия	47	35	36
Греция	57	50	30
Дания	53	36	51
Ирландия	35	28	23
Испания	26	17	26
Италия	37	23	24
Кипр	59	52	27
Латвия	32	15	16
Литва	18	23	19
Люксембург	62	32	27
Мальта	28	17	32
Нидерланды	48	32	34
Польша	36	43	29
Португалия	27	16	25
Словакия	49	33	25
Словения	42	47	32
Финляндия	59	41	25
Франция	62	36	41
Чехия	44	39	20
Швеция	60	48	37
Эстония	35	33	19
ЕС (25)	43	31	30

¹ Официальный статус кандидата на вступление в ЕС имеют Хорватия и бывшая югославская республика Македония. Другие балканские страны – Албания, Босния и Герцеговина, Сербия, Черногория – рассматриваются на нынешнем этапе в качестве потенциальных кандидатов в члены ЕС, и с каждой из них Союз заключил соглашение о партнерстве.

² *Special Eurobarometer, «Attitudes towards European Union Enlargement», Fieldwork March-May 2006, http://ec.europa.eu/public_opinion/archives/ebs/ebs_255_en.pdf.*

ԲՈՒԼՂԱՐԻԱ. ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՆՈՐ ՀԱՆԳՈՒՅՑ

2008թ. հունվարի 18-ին Սոֆիայում Ռուսաստանի, Հունաստանի և Բուլղարիայի ղեկավարների միջև կնքված նոր պայմանագրով կյանքի կոչվեց երկար տարիներ քննարկվող Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղի կառուցման նոր ծրագիրը¹: Ասենք, որ այդ օրերին Ռուսաստանի և Բուլղարիայի միջև կնքվեց նաև մեկ այլ պայմանագիր նոր՝ «Հարավային հոսք» կոչվող գազամուղի կառուցման շուրջ²: Փաստորեն, Ռուսաստանի ակտիվ ջանքերով սկսվում է երկու խողովակաշարի կառուցում, որով Բուլղարիան դառնում է դեպի Եվրոպա նավթի և գազի տարահանման տարածաշրջանի հիմնական երկիրը: Նկատենք, որ մինչև վերջերս դեպի Եվրոպա նավթի և գազի տարահանման համար կարևոր հանգույց էր համարվում Թուրքիան: Հատկապես Բաքու-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Էրզրում գազամուղի կառուցումից հետո այս ծրագրերը դարձան բավական իրական: Թուրքիայի դերը, որպես էներգակիրների կարևոր տարանցման երկրի, էլ ավելի կարևորվեց հայտնի *NABUCCO* ծրագրի շուրջ պայմանագրի կնքումից հետո³: Նկատենք, որ մինչ այդ նույնիսկ Ռուսաստանը «Կապույտ հոսք» գազամուղի կառուցումից հետո ծրագրում էր կառուցել երկրորդ նմանատիպ խողովակաշարը և Թուրքիայի տարածքով գազ մատակարարել Հարավային Եվրոպա: Սակայն հետագայում պաշտոնական Մոսկվան հրաժարվեց նման ծրագրերից: Փաստորեն այսօր, որպես Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա ձգվող գազ- և նավթամուղիների այլընտրանք, Ռուսաստանը ձեռնամուխ է լինում Բուլղարիայի տարածքով անցնող երկու նոր խողովակաշարի կառուցմանը: Հիշեցնենք, որ Բուրգաս (Բուլղարիա)-Ալեքսանդրուպոլիս (Հունաստան) նավթային խողովակաշարով դեպի հունական նավահանգիստ է հոսելու ռուսական Նովոռոսիյսկ նավահանգստից դեպի Բուրգաս ուղղված ռուսական և դազախական նավթը: Այսպիսով հնարավորություն է ստեղծվում շրջանցել Բոսֆոր-Ռարդանել նեղուցները և թուլացնել թուրքական ազդեցությունը ռուսական նավթատարների վրա: Հիշեցնենք, որ վերջին մի քանի տարիների ընթացքում պաշտոնական Անկարան խստացրել է նեղուցներով նավթատարների երթևեկը, ինչի հետևանքով, ըստ որոշ հաշվարկների, Ռուսաստանը տարեկան կորցնում է մինչև \$500 մլն: Այս «խոչընդոտը» հաղթահարելու համար ժամանակին Անկարան Մոսկվային առաջարկել էր կառուցել Սամսուն-Ջեյհան խողովակաշարը, որով ռուսական նավթը Սև ծովի ափին գտնվող թուրքական Սամսուն նավահանգստից կարող էր հոսել դեպի միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստը, սակայն Ռուսաստանը մերժեց այս ծրագիրը և սկսեց կառուցել այլընտրանքային Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս խողովակաշարը: Սև ծովի հատակով դեպի Բուլղարիա՝ «Հարավային հոսք» կոչվող գազամուղի կառուցմամբ Ռուսաստանը լուրջ հարված է հասցնում Թուրքիայի՝ նաև արևելքից գազի արտահանման հիմնական տարանցիկ երկիր դառնալու երազանքներին: Այսպիսով, պաշտոնական Մոսկվան Եվրոպա գազ մատակարարելու նոր հնարավորություն կարող է ստանալ Բուլղարիայի տարածքով՝ թուլացնելով կախվածությունը նաև ուկրաինական ուղղությունից: Հիշեցնենք, որ նմանատիպ մեկ այլ՝ «Հյուսիսային հոսք» գազամուղը կառուցվում է Բալթիկ ծովի ընդերքով, և այսպիսով

¹ Подписано соглашение по нефтепроводу Бургас-Александрополис
<http://top.rbc.ru/economics/18/01/2008/134533.shtml>

² Рыкова Елена, Путин плодотворно съездил в Болгарию, 18.01.2008
<http://www.rb.ru/topstory/politics/2008/01/18/173245.html>

³ ИА REGNUM «Новости», Строительство газопровода NABUCCO начнется в 2008 году
www.regnum.ru/news/663612.html 27.06.2006

Ռուսաստանը հնարավորություն է ստանում լիովին բավարարել Եվրոպայի պահանջարկը՝ շրջանցելով իր համար խնդրահարույց երկրները: «Հարավային հոսքի» բուլղարական ուղղության առավելությունն այն է, որ այդ երկիրն արդեն իսկ Եվրամիության անդամ է, և Ռուսաստանը, մուտք գործելով Բուլղարիա, միանգամից մտնում է Եվրամիության շուկա, ինչը նրան հնարավորություն է տալիս շրջանցել ոչ միայն թուրքական խոչընդոտը, այլ նաև ամրացնել իր դիրքերը եվրոպական շուկայում:

Ադրբեջանի երազանքները

Ադրբեջանը հետաքրքրված է *NABUCCO* ծրագրով: Եվրամիության կողմից ֆինանսավորվող այս ծրագրի համաձայն՝ գազամուղ պետք է կառուցվի Իրանից և Միջին Արևելքից գազը Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա հասցնելու համար: Ադրբեջանի նպատակն է միանալ այս նախագծին և այդ խողովակաշար ուղղել նաև «Շահդենիզ» գազը: \$5 մլրդ արժույթյան այս գազամուղի կառուցման համաձայնագիրը ստորագրվել է 2007-ին Վիեննայում, Թուրքիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի և Ավստրիայի էներգետիկայի նախարարների միջև¹: Սպասվում է, որ գազամուղի կառուցումը կսկսվի արդեն 2008-ին, իսկ 2011-ից կգործի ողջ հզորությամբ: Այս ծրագիրը որոշակի հակասություններ ունի ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև ԱՄՆ քաղաքական շահերի հետ: Վերջինս ակտիվորեն հանդես է գալիս ընդդեմ Իրանից Թուրքիայի տարածքով Եվրոպա գազի առաքման ծրագրերի և նախընտրում է «գործ ունենալ» ադրբեջանական գազի հետ՝ փորձելով համոզել իր եվրոպացի գործընկերներին գազ գնել Ադրբեջանից: Ինչևէ, 2007թ. ձմռանը «Բրիթիշ փեթրոլիում» և «Սթաթոյլ» ընկերությունները հայտարարեցին «Շահդենիզ» հանքավայրում գազի արդյունահանումը սկսելու մասին²: Սպասվում էր, որ առաջին շրջանում հնարավոր կլինի ստանալ օրական մինչև 5.6 մլն մ³ գազ: Նշենք, որ «Շահդենիզ» հանքավայրի պայմանագրի մասնաբաժնի անդամներ են «Բրիթիշ փեթրոլիումը»՝ 25.5% (վերջինս նաև այս համաձայնագրի օպերատորն է), «Սթաթոյլը»՝ 25.5%, Ադրբեջանի նավթային պետական ընկերությունը՝ 10%, «Լուկոյլը»՝ 10%, «Նիկոնը»՝ 10%, «Թոթալը»՝ 10% և «Թպասոն»՝ 10%³: Ադրբեջանական նավթը միջազգային շուկա դուրս բերելու համար կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Այս գազամուղը սպասարկում է «Հարավկովկասյան խողովակաշար» ընկերությունը, որի հիմնական փայտերը նույնպես բրիտանական «Բրիթիշ փեթրոլիումն» է, որը նաև պատասխանատու է այս խողովակաշարի կառուցման և շահագործման համար: Գործարկելով Հարավկովկասյան գազամուղը՝ Ադրբեջանը մտադիր է ակտիվացնել իր գազի առաքումը ոչ միայն Թուրքիա, այլ նաև Եվրոպա: Այս նպատակով ակտիվ բանակցություններ են վարվում մի շարք երկրների հետ, որպեսզի նրանց տարածքով գազը հասցվի արևմուտք: Ծրագրով հետաքրքրված է նաև Իսրայելը, որը փորձում է համոզել, որ Հարավկովկասյան գազամուղը Էրզրումից հասնի Ջեյհան, ինչը նրան հնարավորություն կտա օգտվել կասսայան գազից⁴: Սակայն պաշտոնական Բաքուն ցանկանում է ոչ միայն արտահանել սեփական գազը, այլև դառնալ թուրքմենական և ընդհանրապես միջինասիական գազը Եվրոպա տեղափոխելու տարանցման երկիր: Բայց այս ծրագրերի իրականացմանը խոչընդոտում է Կասպից ծովի միջազգային կարգավիճակի անորոշությունը և Ռուսաստանի ու Իրանի դիրքորոշումը: Վերջիններս հանդես են գալիս ընդդեմ ծովի հատակով ցանկացած խողովակաշարի անցկացմանը⁵:

¹ Նույն տեղում:

² ИА REGNUM «Новости», ВР и "Стагойл" объявили о начале добычи коммерческого газа на "Шахдениз" (Азербайджан), www.regnum.ru/news

³ Նույն տեղում:

⁴ ИА REGNUM «Новости», Израиль стремится повысить интерес Азербайджана и Турции к продолжению газопровода Баку - Тбилиси - Эрзурум до Джейхана, www.regnum.ru/news/827179.html 14.05.2007

⁵ ИА REGNUM «Новости», Иран против Транскаспийского газопровода, но готов отменить *ВИЗОВЫЙ режим с Азербайджаном*, www.regnum.ru/news/931541.html 13.12.2007

Եզրակացություն

Այսպիսով, Ռուսաստանը լուրջ ջանքեր է գործադրում ոչ միայն իր դիրքերը Եվրոպայի էներգետիկ շուկայում ամրապնդելու, այլ նաև դեպի Եվրոպա հոսող նավթա- և գազամուղների վրա վերահսկողությունը պահպանելու համար: Պարզ է, որ այս պայքարում պաշտոնական Մոսկվայի համար ռազմավարական նշանակություն ունի միջինասիական գազի նկատմամբ մենաշնորհային վերահսկողության պահպանումը: Եվ թեև թե՛ Եվրամիությունը, թե՛ ԱՄՆ-ը ռուսական ազդեցությունը թուլացնելուն ուղղված մեծ ջանքեր են գործադրում, սակայն միանշանակ է, որ մինչև օրս միջինասիական գազը Եվրոպա է հոսում միմիայն ռուսական խողովակաշարերով: Նոր՝ «Հարավային հոսք» գազամուղի կառուցմամբ այս վերահսկողությունը դառնում է առավել զգալի: Փաստորեն, այս պահին միակ երկիրը, որը կարող է լրջորեն հավակնել միջինասիական գազին և նավթին, Չինաստանն է, որի աշխարհագրական դիրքը թույլ է տալիս առանց Ռուսաստանի միջնորդության գնել այդ էներգակիրները: Արդեն ավարտվել են Ղազախստանից Չինաստան ձգվող նավթամուղի աշխատանքները, գազամուղի կառուցման պայմանագիր է կնքվել նաև Թուրքմենստանի հետ: Սակայն Եվրոպական ուղղությունը դեռևս լիովին վերահսկվում է Ռուսաստանի կողմից, որի դեմ, Արևմուտքի աջակցությամբ, փորձում են պայքարել երկու երկիր՝ Ադրբեջանը և Թուրքիան: Առաջինը փորձում է դառնալ դեպի Եվրոպա նավթ և գազ արտահանող երկիր, երկրորդը փորձում է դառնալ դեպի նույն Եվրոպա Հարավային Կովկասից, Միջին Ասիայից և Մերձավոր Արևելքից էներգակիրների արտահանման կարևորագույն հանգույց: Բուլղարայի մայրաքաղաք Սոֆիայում կնքված երկու պայմանագրերը, համաձայն որոնց՝ ռուսական և միջինասիական գազի ու նավթի համար որպես տարանցման երկիր հանդես է գալիս Բուլղարիան, հարվածում են այս երկրների ծրագրերին: Այսպիսով, պաշտոնական Մոսկվայի «թեթև» ձեռքով սկսվում է բուլղարա-թուրքական մրցակցության նոր՝ էներգետիկ շրջանը:

Արմեն Մանվելյան

ՈՒՐԱՆ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐ *վիճակագրական վերլուծություն*

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ուրանի հանքարդյունաբերության հետազոտական ծախսերն աճման միտում ունեն: 2004թ. դրանք կազմում էին շուրջ \$133 մլն, ինչն ավելի քան 40%-ով գերազանցում էր 2002թ. համապատասխան ցուցանիշը: 2004թ. միայն Միացյալ Նահանգների բաժինը կազմում էր ավելի քան \$10 մլն:

Վերջին տարիների ընթացքում, համաձայն տարբեր միջազգային կազմակերպությունների գնահատականների, ուրանի հանքարդյունաբերության ռեսուրսները նկատելի աճ են գրանցել: Այդ աճի հիմնական մասը, սակայն, պայմանավորվում է ոչ այնքան նոր հանքերի բացմամբ, որքան նախկինում հայտնաբերված պաշարների վերագնահատմամբ՝ ցածրորակ ուրանի գների բարձրացման ազդեցության ներքո:

Նկատվում է նաև ուրանի արտադրության աճ: Այսպես, եթե 2002թ. արտադրվել էր 36.050 տոննա ուրան, ապա 2004թ. համապատասխան ցուցանիշը կազմում էր 40.263 տ: Եվս մեկ վիճակագրություն. 2004թ. վերջին շահագործման մեջ գտնվող միջուկային ռեակտորների թիվը հաշվվում էր 440 միավոր, որոնց ուրանի պահանջարկը կազմում էր շուրջ 67.320 տոննա: 2004թ. վերջերին ուրանի համաշխարհային արտադրությունը (40.263 տ) բավարարել է համաշխարհային միջուկային ռեակտորների միայն 60%-ը (67.450 տ): Միջազգային մի շարք կազմակերպությունների կանխատեսումներով, 2025թ. ռեակտորների կարիքների բավարարման համար անհրաժեշտ ուրանի համաշխարհային պահանջարկն աճելու է 82.275-ից մինչև 100.760 տոննա ուրան: Նույն կանխատեսումների համաձայն, էներգետիկ-միջուկային պոտենցիալի էական աճ է արձանագրվելու հատկապես Արևելյան Ասիայում (90%, այլ գնահատականներով՝ մինչև 115%), Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի շրջաններում (34-53%): Միջուկային և էներգետիկ կարողությունների ոչ մեծ աճ է կանխատեսվում նաև Հյուսիսային Ամերիկայում (4-27%), իսկ Արևմտյան Եվրոպայում, ընդհակառակը՝ նվազեցում (16-26%)՝ պայմանավորված միջուկային էներգիայի արտադրության կրճատման ծրագրերով:

Ներկայումս ուրանի արտադրությամբ զբաղվում է 19 պետություն, որոնց մեջ առաջատար են Ավստրալիան, Կանադան, Ղազախստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Նամիբիան, Նիգերը, Ուզբեկստանը, Միացյալ Նահանգները և Ուկրաինան¹: 2005թ. դրությամբ, միասին վերցրած, նշված 9 երկրներն ապահովել են ուրանի համաշխարհային արտադրության շուրջ 95%-ը: 2007թ. հուլիսի դրությամբ հանքերից ստացվող ուրանի համաշխարհային արտադրության շուրջ կեսը բաժին է ընկնում Կանադային, Ավստրալիային և Ղազախստանին: Այսպես, Կանադան հանդիսանում է հանքերից ստացվող ուրանի խոշորագույն արտադրողը (ուրանի արտադրության համաշխարհային ռեսուրսների 25%), իսկ Ավստրալիան և Ղազախստանը՝ համապատասխանաբար 19 և 13%:

¹ Ուրանի արտադրությամբ զբաղվող կամ այդ կարողություններն ունեցող երկրների ցուցակում, ըստ տարբեր միջազգային էներգետիկ կազմակերպությունների, հարավկովկասյան հանրապետություններից ընդգրկված է միայն Հայաստանը, որտեղ, սակայն, այս ուղղությամբ տարվող հետազոտությունները գտնվում են նախնական փուլում:

Ուրանի համաշխարհային արդյունահանումը 2002-2006թթ., տոննա ուրան¹

Երկիրը	2002	2003	2004	2005	2006
Կանադա	11604	10457	11597	11628	9862
Ավստրալիա	6854	7572	8982	9516	7593
Ղազախստան	2800	3300	3719	4357	5279
Նիգեր	3075	3143	3282	3093	3434
Ռուսաստան/ մոտավոր	2900	3150	3200	3431	3262
Նամիբիա	2333	2036	3038	3147	3067
Ուզբեկստան	1860	1598	2016	2300	2260
ԱՄՆ	919	779	878	1039	1672
Ուկրաինա/ մոտավոր	800	800	800	800	800
Չինաստան/ մոտավոր	730	750	750	750	750
Հարավային Աֆրիկա	824	758	755	674	534
Չեխիա/ մոտավոր	465	452	412	408	359
Հնդկաստան/ մոտավոր	230	230	230	230	177
Բրազիլիա	270	310	300	110	190
Ռումինիա/ մոտավոր	90	90	90	90	90
Գերմանիա	212	150	150	77	50
Պակիստան/ մոտավոր	38	45	45	45	45
Ֆրանսիա	20	0	7	7	5
Համաշխարհային, ընդամենը	36 063	35 613	40 251	41 702	39 429

Աղբյուրը՝ Համաշխարհային միջուկային սառցիացիա, <http://db.world-nuclear.org/>, WNA Market report data

2006թ. դրությամբ աշխարհում ուրան արդյունահանող խոշորագույն ընկերությունները

Ընկերությունը	ուրան, տոննա	համաշխարհային, %
Կամեկո (Կանադա)	8249	20,9
Ռիո Տինտո (ավստրալ.-բրիտան. կոնցեռն)	7094	18,0
Արևա (ֆրանս.-գերմանական)	5272	13,4
ԿազԱտոմՊոմ (Ղազախստան, պետ.)	3699	9,4
ՏՎԵԼ (ՌԴ, պետ.)	3262	8,3
ԲՀՊ Բրիթոն (Ավստրալիա-Բրիտանիա)	2868	7,3
Նավոյ (Ուզբեկստան)	2260	5,7
Ուրանիում ուան (Կանադա)	1000	2,5
Ընդամենը (8)	33 704	85,5%

Աղբյուրը՝ Համաշխարհային միջուկային սառցիացիա, <http://db.world-nuclear.org/>, WNA Market report data

¹ Հանքարտադրությունն իրականացվում է տարբեր մեթոդներով: Այսպես, 1990թ. ուրանի համաշխարհային արտադրության 55%-ը ստացվում էր ստորգետնյա հանքերից, որը 1999թ. կազմում էր արդեն 33% (ներկայումս՝ 50%): Գործում են նաև այլ տարածված միջոցներ (բաց արդյունահանում և այլն):

2006թ. դրությամբ ուրանի խոշորագույն հանքերը, ընկերությունները

Հանք	Երկիր	Հիմնական սեփականատեր	արտադրություն, տոննա	համաշխարհային, %
ՄաքԱրթուր Բիվեր	Կանադա	Կամեկո	7200	18,3
Ռենգեռ	Ավստրալիա	ԵՌԱ ¹ (Ռիո Տինտո 68%)	4026	10,2
Ռոսինգ	Նամիբիա	Ռիո Տինտո (69 %)	3067	7,8
Կրազբոկամենսկ	Ռուսաստան	ՏՎԵԼ	2900	7,4
Օլիմպիկ Դեմ	Ավստրալիա	ԲՀՊ Բիլիթոն	2868	7,3
Ռեբիթ Լեյք	Կանադա	Կամեկո	1972	5,0
Ակոուտա	Նիգեր	Արևա/Օնարեմ ²	1869	4,7
Աքդալա	Նիգեր	Արևա/Օնարեմ	1565	4,0
Հայլենդ-Սմիթ Ռենչ	ԱՄՆ	Կամեկո	786	2,0
Բևեդի	Ավստրալիա	Հըլֆգեյթ (Ավստրալիա)	699	1,7
ՄաքԶլին Լեյք	Կանադա	Կոգեմա (Ֆրանսիա, պետ.)	690	1,7
Ընդամենը (12)			28 642	72,6%

Աղբյուրը՝ Համաշխարհային միջուկային սանցիացիա, <http://db.world-nuclear.org/>, WNA Market report data

Ուրանի հետազոտված պաշարները 2005թ. դրությամբ, \$ 130/կգՈւ

	Երկիր	տոննա
1.	Ավստրալիա	1 143 000
2.	Ղազախստան	816 099
3.	Կանադա	443 800
4.	ԱՄՆ	342 000
5.	Հար. Աֆրիկա	340 596
6.	Նամիբիա	282 359
7.	Նիգեր	278 700
8.	Ռուսաստան	172 402
9.	Ուզբեկստան	115 526
10.	Ուկրաինա	89 836
11.	Հորդանան	78 975
12.	Հնդկաստան	64 840
13.	Մոնղոլիա	61 950
14.	Չինաստան	59 723
15.	Այլ	227 588

Աղբյուրը՝ NEA/IAEA 2006, http://www.worldenergy.org/documents/fig_uranium_6_4.gif

Հարստացված ուրան. ընդհանուր վիճակագրություն

Ուրանի հարստացման խոշորագույն արդյունաբերական գործարանները գտնվում են Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Մեծ Բրիտանիայում, Միացյալ Նահանգներում և Ռուսաստանի Դաշնությունում: Ընթացքի մեջ է ցենտրիֆուգի նորագույն գործարանների կառուցումը Ֆրանսիայում և Միացյալ Նահանգներում:

¹ Energy resources of Australia /ERA/.

² Օնարեմ-ը նիգերիական ընկերություն է:

Ուրանի հարստացման կարողություններն ըստ երկրների ու ընկերությունների, հազ. Separative Work Units, տարեկան (2002, 2006 և 2015թթ.)

Երկիրը, ընկերությունը	2002	2006	2015
Ֆրանսիա/Արևա	10.800'	10.800'	7500
Գերմ.-Նիդեռլանդ. Մեծ Բրիտանիա/Ուրենկո	5850	9000	11.000+
Ճապոնիա/ՋՆՖԼ-Japan Nuclear Fuel Ltd.	900	1050	1500
ԱՄՆ/Ուսեկ- U.S. Enrichment corporation	8000'	11.300'	3500+
ԱՄՆ/Ուրենկո ¹ -Արևա	0	0	4000+
Ռուսաստան/Տենեքս-Техснабэкспорт	20.000	25.000	33.000+
Չինաստան/ՄՆՆՍ-China National Nuclear corp.	1000	1000	1000+
Այլ	5	300	300
Ընդհանուր	~46.500	48.450	61.800+

՝ դիֆուզիա

Աղբյուրը՝ Nuclear Engineering International 2003; World Nuclear Handbook; USEC; WNA Market Report 2007., <http://www.uic.com.au/nip33.htm>

Ուրանի հարստացման տեխնոլոգիաներում դիֆուզիայի արդյունաբերությունն աստիճանաբար զիջում է դիրքերը ցենտրիֆուգին:

Ուրանի հարստացման տեխնոլոգիան 2007 և 2017թթ. համեմատությամբ

Ստացման աղբյուրը	2007	2017
Դիֆուզիա	25%	0
Ցենտրիֆուգ	65%	96%
ԲՀՈւ/Բարձրակարգ հարստացված ուրան	10%	4%

Աղբյուրը՝ Nuclear Engineering International 2003; World Nuclear Handbook; USEC; WNA Market Report 2007., <http://www.uic.com.au/nip33.htm>

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

¹ Ուրենկո-ն հոլանդա-գերմանա-բրիտանական համատեղ կոնցեռն է:

РОССИЯ И ЕС: ЭНЕРГЕТИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО НЕИЗБЕЖНО¹

Отношения между Россией и Европейским союзом можно характеризовать в терминах энергетической взаимозависимости. Поэтому неудивительно, что энергетическая безопасность является предметом общей озабоченности. Европейские лидеры боятся попасть в зависимость от одного поставщика, а их российские коллеги не хотят полагаться лишь на один рынок. Вероятно, каждая из сторон постарается избежать такой ситуации, однако практические проблемы производства и поставок энергии легче решать совместными усилиями.

Европейцам нужны нефть и газ, россиянам – деньги. ЕС, объединяющий 27 стран, получает из России четвертую часть необходимых энергоносителей, а больше половины совокупных российских поставок нефти и около четверти газа идут в Европу (хотя экспорт газа приходится частично компенсировать импортом из Центральной Азии). В последнее время доходы федерального бюджета России почти на 50 % складываются из налогов нефтегазовой сферы (налог на добычу сырья, налог на прибыль, экспортные пошлины). Конечно, далеко не все они связаны с импортом в Европу, но данное направление наиболее прибыльно: цены и экспортные пошлины здесь намного выше, чем внутри России и СНГ.

